ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ(ԳՀ)
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 03 -ը մայիսի 2019թ.
ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ Ա. Մուրադյան,

գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ՋԲՖԿ ծառայության պետ, Ա. Պապյան
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության ԿԾԲ գլխավոր մասնագետ Ս. Սարգսյան,

Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, Ա. Մաղաքյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան եզրակացության քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան եզրակացության քննարկման և ընտրված մասնակցին հայտարարելու մասին.

(Ա. Մաղաքյան)

1.1 ***ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2011թ. N [illegible]-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն «ՍԻՆԽՐՈՆ» ՍՊԸ-ն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չուներ,*** ըստ ներկայացված տվյալների Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանը, հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ուներ 20,000 ՀՀ դրամի ժամկետանց հարկային պարտավորություններ: Քանի որ մասնակցի հարկային պարտավորությունների չափը չէր գերազանցում հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով սույն հրավերով նախատեսված **առավելագույն** գնի մինչև մեկ տոկոսը, և ոչ ավելի էր, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը, ուստի գնահատող հանձանաժողովը որոշեց՝ **Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանի** հայտը գնահատել բավարար: ***Կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի մասով հանձնաժողովի կողմից չի գնահատվել:***

1.2 Հիմք ընդունելով վերը նշվածը՝ հանձնաժողովը որոշեց առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ տվյալները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին և 1-ին չափաբաժնի մասով «Սինխրոն» ՍՊԸ-ին, իսկ 2-րդ չափաբաժնի մասով Ա/Ձ Անդրանիկ Գասպարյանին հայտարարել ընտրված (հաղթող) մասնակիցներ և պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀՊՆՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(**Ա. Մաղաքյան**)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-10/7» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Մուրադյան
Գնահատող	Ա. Պապյան
Գնահատող	Ս. Սարգսյան
Հանձնաժողովի քարուղար՝	Ա. Մաղաքյան